կարգով, դեռ իրանց տեղումն էին: Ես մօտեցայ, պառկեցի նոյն մինդարի վրայ, ուր ճաշի ժամանակ նստած էր Ասլանը:

Սրահի միջով ես նայում էի դէպի ընդարձակ պարտէզը: Նա բաժանուած էր սրահից փայտեայ ցած վանդակապատով միայն: Ծառերը այն աստիճան սերտ կերպով գրկուած էին միմեանց հետ, որ ես շատ հեռու չէի տեսնում: Աւելի քան տերեւները, նրանց ճիւղերը ծանրաբեռնուած էին հասունացած պտուղներով: Արեգակը կրակ էր թափում: Նրա ջերմութիւնից ամէն մի ծառ, ամէն մի թուփ, ամէն մի պտուղ, ամէն մի խոտ եւ ծաղիկ լցրել էր օդը ախորժելի անուշահոտութեամբ: Ես սիրում էի այդ մեղմ, քնաբեր անուշահոտութիւնը, որ բուրում է ծառաստանը, ոգեւորուած միջօրէի ջերմութիւնից: Բայց իմ քունը չէր տանում: Ճնճղուկները, թաքնուած տերեւների խտութեան մէջ, լուռ մրափում էին: Ծիծեռնակը, որ սրահի ձեղունի գերաններից մէկի կողքին կպցրել էր իր բաժակաձեւ բոյնը, նա էլ, իր ճտերի մօտ թառած, քաղցր թմրութեան մէջ նիրհում էր: Իսկ ես քնել չէի կարողանում:

Ինձ տանջում էին զանազան մտատանջութիւններ: Մինչեւ այն օր տեսած, լսած, հասկացած, չհասկացած առարկաների կատարեալ խառնաշփոթութիւնը ամբարուած էր իմ գլխում: Այդ մռայլ քաոսից ոչինչ ելք գտնել չէի կարողանում: Որտեղի՞ց էի գալիս, ո՞ւր էի գնում, ի՞նչ նպատակների էի ձգտում, ո՞ւր կը տանէին ինձ այդ թափառումները, ինձ բացատրել չէի կարողանում: Ես խարխափում էի անստուգութեան եւ անգիտակցութեան խաւարի մէջ: «լաւ է, մտածում էի ես, ամենեւին չհաւատալ, քան թէ կիսով չափ հաւատալ... Բայց մի զգացմունք միայն ինձ հաշտեցնում էր իմ անորոշ վիճակի հետ. դա էր այն ջերմ սէրը, որ ես ունէի դէպի Ասլանը: Այդ սէրը լրացնում էր իմ թերահաւատութիւնը: Սիրում էի այդ եռանդոտ երիտասարդին: Նրա մէջ կար մի բան, որ շատ սիրելի էր: Բայց թէ ի՞նչ էր այդ բանը, ես ոչինչ կերպով ըմբռնել չէի կարողանում...

Ամէն տեղ, ուր եւ գնում էինք, ես հանդիպում էի նորանոր պատրանքների, նորանոր կեղծիքների: Կարծես իմ աչքերը պատած լինէին թանձր մշուշով, հեռուն չտեսնելու համար: Եւ ինչո՞ւ համար տեսնէի: Գուցէ նա այնքա՜ն սարսափելի էր, որ հէնց այդ պատճառով Ասլանը չէր կամենում խլել իմ աչքերից կախարդական քօղը եւ իմ առջեւ բաց անել ապագայի սոսկալի պատկերը: Գուցէ նա չր կամենում միանգամից վախեցնել ինձ: Գուցէ նա այնքան հրապուրիչ եւ այնքան գեղեցիկ էր, որ ե՛ւ չէր կամենում ինձ միանգամից յափշտակութիւնների մէջ ձգել: Եւ միթէ՛ ես ունէի այնքան պատրաստականութիւն ամէն ինչ հասկանալու համար: Ես ինքս ուզում էի իմ դա-